ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«19» 05 2025 թ. Թիվ 127-Հ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔԵՐՈՎ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 65-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների դեպքերով նախաքննությունն արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու նպատակով, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 267-րդ հոդվածի 3-րդ մասով, 268-րդ հոդվածի 3-րդ մասով, 269-րդ հոդվածի 3-րդ մասով, 271-րդ հոդվածի 3-րդ մասով, 281-րդ հոդվածի 2-րդ մասով, 282-րդ հոդվածի 3-րդ մասով, 284-րդ հոդվածի 3-րդ մասով, 285-րդ հոդվածի 2-րդ մասով, 286-րդ հոդվածի 2-րդ մասով, 287-288-րդ հոդվածներով, 289-րդ հոդվածի 2-րդ մասով, 290-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 291-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 292-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 293-294-րդ հոդվածներով, 296-րդ հոդվածի 3-րդ մասով, 340-րդ հոդվածով, 399-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործությունների դեպքերով նախաքննությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 288-րդ հոդվածով նախատեսված հանցագործության դեպքերով նախաքննությունն իրականացնել

Կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում, եթե առերևույթ հանցանքի կատարման արդյունքում պատճառված ենթադրյալ վնասի չափը գերազանցում է 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:

2. Սույն հրամանի 1-ին կետով նախատեսված հանցագործությունների դեպքերով Կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներում ստացված հաղորդումը՝ կից նյութերով կամ նախաձեռնված քրեական վարույթը՝ կից գրությամբ, մեկօրյա ժամկետում ուղարկվում է Կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն:

3. Սույն հրամանի 1-ին կետով չնախատեսված հանցագործությունների դեպքերով Կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում ստացված հաղորդումը՝ կից նյութերով կամ նախաձեռնված քրեական վարույթը՝ կից գրությամբ, մեկօրյա ժամկետում ուղարկվում է Կոմիտեի համապատասխան ստորաբաժանում:

4. Քրեական վարույթների շրջանակներում սույն հրամանի 1-ին կետով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ հայտնաբերելու դեպքում՝ նախաքննությունն իրականացնել տվյալ ստորաբաժանումում, եթե քրեական վարույթները միմյանց հետ կապված են փաստական հանգամանքներով և առկա է արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտություն:

5. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 291-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 292-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 293-րդ, 340-րդ հոդվածներով և 399-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ հայտնաբերվելու դեպքում այդ վարույթներով ենթադրյալ հանցանք կատարած անձին ձերբակալելուց, քրեական հետապնդում հարուցելու մասին միջնորդություն ներկայացնելուց և այն բավարարվելու դեպքում մեղադրանք ներկայացնելուց, խափանման միջոց ընտրելուց հետո՝ մեկօրյա ժամկետում, նախաձեռնված քրեական վարույթն ուղարկել Կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն:

6. Քրեական վարույթների շրջանակներում հայտնաբերված սույն հրամանի 1-ին կետով նախատեսված հանցագործությունների դեպքերով հաղորդում կազմելիս, ինչպես նաև նոր քրեական վարույթ նախաձեռնելիս և դրանք Կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն ուղարկելու հարցը քննարկելիս՝ ղեկավարվել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի պահանջներով:

7. Կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության և Կոմիտեի այլ ստորաբաժանումների միջև հաղորդումների, քրեական վարույթների փոխանցումներն իրականացնել Կոմիտեի նախագահի համապատասխան ոլորտները համակարգող տեղակալների միջոցով:

8. Կոմիտեի տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության և Կոմիտեի այլ ստորաբաժանումների իրավասությանը վերապահված հանցագործությունների համակցությամբ նախաձեռնված կամ քննվող քրեական վարույթներով նախաքննությունն իրականացնել առավել ծանր հանցագործություններով նախաքննություն իրականացնելու իրավասություն ունեցող ստորաբաժանումում:

Սույն կետի իմաստով առավել ծանր հանցագործություն է համարվում այն հանցագործությունը, որի սանկցիայով նախատեսված է առավել խիստ պատժատեսակ, իսկ նույն խստության պատժատեսակի դեպքում՝ հիմք է ընդունվում պատժաչափի վերին շեմը:

9. Քրեական վարույթով նախաքննության ընթացքում ներկայացված մեղադրանքը փոփոխելու կամ այլ հանցանքի կատարման կապակցությամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու դեպքում նախաքննությունը շարունակել Կոմիտեի նույն ստորաբաժանման կողմից:

10. Սույն հրամանով նախատեսված դրույթներից բացառություն են կազմում այն դեպքերը, երբ առկա է Կոմիտեի նախագահի հանձնարարությունը՝ քրեական վարույթով նախաքննությունը կոնկրետ ստորաբաժանման կողմից կատարելու վերաբերյալ:

11. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերապահել Կոմիտեի նախագահի տեղակալներին՝ ըստ համակարգման ոլորտների:

12. Ուժը կորցրած ճանաչել Կոմիտեի նախագահի 2023 թվականի փետրվարի 24-ի «Տնտեսական հանցագործությունների եվ մաքսանենգությունների դեպքերով նախաքննությունն արդյունավետ կազմակերպելու մասին» N 65-Լ հրամանը:

13. Սույն հրամանով նախատեսված կարգավորումները կիրառելի են հրամանն ուժի մեջ մտնելու պահից:

14. Սույն հրամանն ուղարկել Կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին և մյուս ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ